

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

**Գաղղիս:** — Այս ամիս 'ի Գաղղիս հանդիպած նշանաւոր քուզաքական գէպքն է Պաշտօնարանին անկումը։ Ցարդ հասարակապետութեան ամէն պաշտօնարանի հրաժարեր էին՝ յետ խորհրդարանին անվտառհ քուէ, արկութեան, այլ այս անդամ զարմանալին այս եղաւոր թիրար պաշտօնարանն հրաժարեցաւ ծերակուտին քուէարկութեան պատճառաւ, նկատմամբ օսմանեան տէրութեան վաճառականական գանձնառութեան, նախագահն Գառնոյ յետ խորհրդակցելու դիւնագէտ նշանաւոր անձանց հետ՝ յանձնեց Ֆրէյսինէի կազմել նոր պաշտօնարանը, որ և իսկյոյն կատարեց։

**Գերմանիա.** — Աշխարհի ամէն լրագիրը կը խօսին արդ Պիպմարք իշխանին հրաժարման վրայ։ Խիսանը և իւր որդին իրենց հրաժարականը մատուցին կայսեր, զորս ընդունեցաւ և մեծ պատիւներ և գովութիւններ տալով հանեց զինքը պաշտօնէն, և տեղը դրաւ զջօրավարն Քարբիսի։ Երկաթեայ քարտուզարին հրաժարման պատճառը իւրաքանչիւր լրագիր ըստ կամս և ըստ հաճյու կ'ենթադրէ։ Մակայն հաւանական կարծիքն է որ կարծեաց անհամաձայնութիւն մը տեղի ունեցեր է ընդ կայսեր, կայսրը գործաւորական խնդրոյն վերաբերեալ համաժողով մը գումարեց՝ ի Քեռվին, բայց այ ժողովը գումարելին առաջ շատ մը թուղթեր հրատարակեց՝ որք կը թուի թէ իշխանին լիուի հաւանութեան չեն արժանացած։ Մեծ տէրութեանց լրագիրը նախ շատ զյուշութեամբ ընդունեցան այս լուրը, բայց երբ պ'չանակէս ծանուցաւ ամէնքն ալ յայտնեցին իրենց խորին ցաւակցութիւնն և զժոհութիւնը։ Նոյն իսկ գաղղիսական մամուլն՝ որ կարծես թէ ընդհանրապէս ուրախական և յաղթական ոճով պիտի հրատարակեր իւր յօդուածները ընդհակառակն կը տեսնենք որ ինքն ևս անհանդիստ է այս լրոյն պատճառաւ և կերպով մը տժգոհ, վասըն զի երիտասարդ կայսեր այս փոփոխութեան մէջ պարզ դիւնապատական յեղափոխութիւն մը չի նկատեր, այլ ուրիշ բան մ'ես՝ զոր ամէն մարդ կ'ըմբռնէ։ Եւ այս բանը կասկածելուն պատճառն այն է որ այժմ Գերմանիոյ կայսրը մէկդի թողով գրեթէ բոլոր դիւնագէտ խոհեմ և ծանրակշռու անձինք՝ չորս կողմը կը ժողվէ երիտասարդ և անփորձ զօրավարներ, որք բնականաբար պիտի ջանան իրենց ասպարէզ մը բանալ քաջութեան և փառաց։